ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԴԱՍԱՎԱՆԴԻ՛Ր, ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում մանկավարժի որակավորում չունեցող երիտասարդ մասնագետների ներգրավման կարևորությունը, գիտակցելով մասնագետներին որակավորման շնորհման անհրաժեշտությունը, ջանալով նպաստել հանրակրթության մեջ բարձորակ կրթություն ստացած մասնագետների գիտելիքների ներդրմանը,

ԸՆԴԳԾԵԼՈՎ «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի առաքելությունը, այն է՝ կայուն ֆինանսական ներդրումների և բազմաթիվ ծրագրերի իրականացման միջոցով նպաստել կրթական հնարավորությունների ընդլայնմանը, որակյալ կրթության հասանելիությանը՝ նպաստելով կրթական համակարգի զարգացմանը և կատարելագործմանը,

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ Կողմերի համատեղ ջանքերի շնորհիվ համայնքների դպրոցներում կրթության որակի բարձրացումը, համայնքներում ուսուցանել ցանկացող բարձրակարգ մասնագետների խրախուսումը, վերապատրաստում անցած մասնագետների ներգրավումը, դասավանդման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը,

ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԵԼՈՎ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի և «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի փոխշահավետ համագործակցության փորձը և հնարավոր հեռանկարները,

ՀԻՄՆՎԵԼՈՎ վերոհիշյալ դրույթների վրա և ի կատարումն այդ դրութների՝

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ ՀՖԿՍՊԻ), ի դեմս ռեկտոր Տիգրան Սիմոնյանի, մի կողմից, և «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ), ի դեմս գործադիր տնօրեն Լարիսա Վիրջինիա Հովաննիսյանի, մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր, առանձին նաև՝ Կողմ), սույնով հայտնում են իրենց պատրաստակամությունը համագործակցել սույն փոխըմբռնման հուշագրի (այսուհետ նաև՝ Հուշագիր) շրջանակում հետևյալի շուրջ.

1" ՀՈՒՇԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

I.1. Սույն Հուշագիրը պարունակում է Հուշագրի դրույթների վերաբերյալ Կողմերի լիակատար ըմբռնումը և համաձայնությունը: Սույն Հուշագիրը մտադրությունների մասին համաձայնություն է և պարունակում ու հաստատում է Կողմերի համագործակցելու ցանկությունը և պատրաստակամությունը:

I.2. Կողմերը Հուշագրի գործողության ընթացքում իրենց գործունեության ոլորտում առավել արդյունավետ գործելու և կայուն զարգացում ապահովելու նպատակով համաձայնում են իրականացնել համատեղ ծրագրեր:

I.3. Սույն Հուշագրով Կողմերը շարունակում են համագործակցել Հիմնադրամի կողմից ընտրված երիտասարդ մասնագետներին Հայաստանի Հանրապետության դպրոցներ գործուղման ծրագրի շրջանակներում՝ տրամադրելով անվերապահ աջակցություն մասնագետների կրթության ապահովման ուղղությամբ:

I.4. Կողմերը Հուշագրի շրջանակում կարող են ձևավորել համատեղ աշխատանքային խմբեր՝ ուղղված փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմանը և լուծմանը:

I.5. Կողմերը Հուշագրի գործողության ընթացքում համաձայնում են համագործակցել և հրապարակել Հուշագրի շրջանակում իրենց գործունեությանն առնչվող նյութեր:

I.6. Կողմերը տալիս են իրենց համաձայնությունը Հուշագրի գործողության ողջ ընթացքում Հուշագրի ստորագրման և դրա գոյության մասին տեղեկության տարածմանը համապատասխան մամլո հաղորդագրությունների, պաշտոնական կայքերի, գովազդային ու տեղեկատվական բուկլետների (և այլնի) միջոցով: Նշված համաձայնությունը ներառում է նաև Հուշագրի գոյության մասին տեղեկության տարածման նպատակով համապատասխան ապրանքային և ծառայությունների մատուցման նշանների և ֆիրմային անվանումների օգտագործման անհատույց թույլտվություն:

I.7. Կողմերն ըստ անհրաժեշտության հանդիպում են՝ Հուշագրի շրջանակում իրականացվող աշխատանքների առաջընթացի ստուգման, արդյունքների գնահատման և հետագա աշխատանքների ծրագրման նպատակով:

I.8. Սույն Հուշագրի գործողության ողջ ընթացքում և նույնիսկ վերջինիս դադարեցման կամ ավարտից հետո Կողմերը պարտավորվում են հարգել ցանկացած բնույթի տեղեկության և փաստաթղթերի գաղտնիությունը, որոնք նրանց տրամադրվել կամ հայտնի են դարձել Հուշագրի շրջանակում:

I.9. Յուրաքանչյուր Կողմ ինքն է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկում իր անձնակազմի կամ տեղեկությանն ու փաստաթղթերին տիրապետող որևէ աշխատակցի կողմից գաղտնիության պահպանման համար:

I.10. Հուշագրով առաջարկվող համագործակցությունը բացառիկ իրավունքներ չի վերապահում: Կողմերն ազատ են Հուշագրի դրույթների վերաբերյալ համաձայնագրեր և հուշագրեր կնքել ցանկացած այլ հաստատության և/կամ կազմակերպության հետ:

I.11. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները՝ Հուշագրով իրենց ստանձնած պարտավորությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար:

I.12. Կողմերը պարտավորվում են Հուշագրի կամ դրա հիման վրա իրականացվող ծրագրերի իրականացման ժամանակ միմյանց տրամադրել ցանկացած փաստաթուղթ կամ տեղեկություն, որն անհրաժեշտ է Կողմին պարտավորությունների ամբողջական կատարման համար:

I.13. Սույն Հուշագրի կամ դրա հիման վրա իրականացվող ծրագրերի ընթացքում ստեղծված և հեղինակային կամ հարակից այլ իրավունքներով պաշտպանվող ցանկացած առարկա այն ստեղծող Կողմի սեփականությունն է, այլ դեպքերում Կողմերի համատեղ ստեղծած առարկան/ծրագիրը համամասնորեն պատկանում է Կողմերին, և դրա նկատմամբ հեղինակային և հարակից իրավունքները գործում են համամասնորեն:

I.14. Սույն Հուշագրի ստորագրմամբ չի դադարում Կողմերի միջև նախկինում կնքված հուշագրերի և/կամ համաձայնագրերի գործողությունը:

2" ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2"1" Կողմերի համագործակցության հիմնական նպատակը կրթության զարգացման տեսլականի իրականացման շրջանակներում ջանքերը համատեղելու միջոցով կրթական հզոր, հագեցած, արդիական, նորարար, փոփոխությունների հիմքով զարգացող ծրագրերի մշակումն ու հանրակրթական ուսումնական հաստատություններում երիտասարդ մասնագետների ներգրավմանն աջակցությունն է՝ հանրակրթության ոլորտի մասնագետների պատրաստման միջոցով:

2"2" Ի կատարումն Հուշագրի հիմնական նպատակի և այլ դրույթների՝ Կողմերը համաձայնում են համագործակցել.

2"2"1" երիտասարդ մասնագետների ներգրավման, նրանց մանկավարժի որակավորմանը համապատասխան կրթական նորարար մեթոդների կիրառման բնագավառներում,

2"2"2" կրթության դերի բարձրացման ուղղությամբ ծրագրերի մշակման և իրականացման ուղղությամբ,

2"2"3" կրթությանն առնչվող ցանկացած բնագավառում մասնագետների, Հիմնադրամի շրջանավարտների կամ մասնակիցների ներգրավմանն աջակցելու ուղղությամբ,

2"2"4" ներդրված ծրագրերի արդյունավետ իրականացման դեպքում ծրագրերի կայունության և զարգացման ուղղությամբ,

2"2"5" մեդիա դաշտում՝ տեղեկատվության փոխանցման համար համատեղ քայլերի մշակման և հնարավորության դեպքում համատեղ մեդիաարտադրանքի ստեղծման ուղղությամբ,

2"2"6" ոլորտային իրավական կարգավորումների հարցում փոխադարձ խորհրդատվական աջակցության ուղղությամբ:

3" ԾԱԽՍԵՐ

3"1" Սույն Հուշագիրը Կողմերի համար ֆինանսական և նյութական պարտավորություններ չի առաջացնում: Յուրաքանչյուր Կողմ ինքը պետք է կատարի իր ծախքերը: Վճարումները և ծախսերը Հուշագրով սահմանված իր պարտավորությունները կատարելիս, և ոչ մի Կողմ չպետք է նման ծախսերը վերագրի կամ գանձի մյուս Կողմից: Հիմնադրամը, հաշվի առնելով ծրագրի առանձնահատկությունները, կարող է փոխհատուցել մասնագետների կրթական վճարները:
3"2" Կողմերը համագործակցության ընթացքում, առանձին դեպքերում, փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր համաձայնագրով, կարող են իրենցից յուրաքանչյուրի համար սահմանել ֆինանսական պարտականություններ՝ կախված այս կամ այն աշխատանքների և/կամ ծառայությունների ծախսատարությունից:

4" ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4"1 Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անժամկետ:
4"2" Սույն Հուշագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 6 (վեց) ամիս առաջ՝ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

5" ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն Հուշագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով՝ երկամսյա ժամկետում:

6" ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Հուշագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Հուշագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի

ազդեցությունը շարունակվում է մեկ ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղեկացնելով մյուս Կողմին:

7" ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7"1" Կողմերից յուրաքանչյուրի պահանջով Հուշագիրը կարող է ենթարկվել փոփոխության՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
7"2" Սույն Հուշագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
7"3" Սույն Հուշագիրը բաղկացած է 2 (երկու) հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող բնօրինակից, որոնցից մեկական օրինակ տրվում է Կողմերին: Սույն հուշագիրը կազմված է հայերենով:

փետրվար, 2025թ. քաղաք Երևան

8" ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 11 Ռեկտոր՝ Տիգրան Սիմոնյան ստորագրություն, Կ.Տ.	«Դասավանդի՛ր, Հայաստան» ՀՀ, ք" Երևան, Մելիք-Ադամյան 2/1 Գործադիր տնօրեն՝ Լարիսա Վիրջինիա Հովհաննիսյան ստորագրություն, Կ.Տ.